600.0291.26.10.16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ՈՐՈՇՈՒՄ

26 հոկտեմբերի 2016 թվականի №291Ա
ք.Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 25-Ի №214Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով, որ՝

ա) 2016 թվականի հոկտեմբերի 10-ի №11 գրությամբ (այսուհետ՝ Գրություն) «ԷՆԵՐԳՈ ՍՏԻԼ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն) դիմել է Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով (այսուհետ՝ Հանձնաժողով)՝ խնդրելով երկու տարի չորս ամսով երկարաձգել Հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի «ԷՆԵՐԳՈ ՍՏԻԼ» փակ բաժնետիրական ընկերությանը «Սահակյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №214Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված «Սահակյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում (այսուհետ՝ Կայան) էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության №0549 լիցենզիայով (այսուհետ՝ №0549 լիցենզիա) ամրագրված կառուցման ժամանակահատվածը,

բ) Հանձնաժողովի 2013 թվականի նոյեմբերի 1-ի №374Ն որոշմամբ հաստատված՝ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգի (այսուհետ՝ Կարգ) 39-րդ կետի համաձայն՝ արտադրության լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը կարող է երկարաձգվել նախկինում սահմանված կառուցման ժամանակահատվածից ոչ ավելի,

գ) Գրությանը կից ներկայացված տեղեկանքի համաձայն՝ պատվարի շինարարությունն ամբողջությամբ ավարտվել է, անցկացվել է ճնշումային խողովակների շուրջ հիսուն

տոկոսը, ավարտված է Կայանի շենքի շուրջ երեսուն տոկոսը և էլեկտրական գծերի շուրջ իննսուն տոկոսը, հիդրոագրեգատները գտնվում են պատրաստման փուլում, և

հիմք ընդունելով «Էներգետիկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածների 1-ին մասերը, Կարգը, Կարգի №3 հավելվածի՝ երաշխիքների ներկայացման կարգի 8-րդ կետի 1-ին ենթակետը և հաշվի առնելով «ԷՆԵՐԳՈ ՍՏԻԼ» փակ բաժնետիրական ընկերության 2016 թվականի հոկտեմբերի 11-ի գրությունը՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը որոշում է.

1. Երկարաձգել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2014 թվականի հունիսի 25-ի «ԷՆԵՐԳՈ ՍՏԻԼ» փակ բաժնետիրական ընկերությանը «Սահակյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանում էլեկտրական էներգիայի (հզորության) արտադրության լիցենզիա տրամադրելու մասին» №214Ա որոշմամբ Ընկերությանը տրամադրված №0549 լիցենզիայով ամրագրված կառուցման ժամանակահատվածը՝ լիցենզիայի պայմանների 3-րդ կետի 1-ին ենթակետում «մինչև 2016 թվականի նոյեմբերի 1-ը» բառերը փոխարինելով «մինչև 2018 թվականի նոյեմբերի 1-ը» բառերով:
2. Ընկերությանը՝ №0549 լիցենզիայի պայմանները չկատարելու պատճառով «Սահակյան ՓՀԷԿ-2» փոքր հիդրոէլեկտրակայանի կառուցման ժամանակահատվածը երկարաձգելու համար, սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից՝
   1) մեկամսյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացված «Ամերիաբանկ» փակ բաժնետիրական ընկերության 2014 թվականի օգոստոսի 11-ի №O.AB.100.11CB.ESC.4.2492.14 երաշխիքի համաձայն երաշխավորված վեց միլիոն ութսունհինգ հազար դրամ գումարից երեք միլիոն քառասուներկու հազար հինգ հարյուր դրամը №900005028130 հաշվեհամարով փոխանցել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե.
   2) քառասունհինգօրյա ժամկետում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ներկայացնել վեց միլիոն ութսունհինգ հազար դրամ գումարի նոր երաշխիք՝ մինչև 2018 թվականի դեկտեմբերի 16-ը գործողության ժամկետով:

3. Ընկերությանը՝ ընդունել ի գիտություն, որ իրավասու է սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում այն բողոքարկել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով կամ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2016 թվականի նոյեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԵՆԹԱԿԱԶՄ Ռ. ՆԱԶԱՐՅԱՆ

ք. Երևան
26 հոկտեմբեր 2016թ.